Կարգապահական գործ թիվ ԿԳ-26002

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ ԿՈԼՅԱՅԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Արաքս Վարդանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաղդասարյանի, Կարեն Խալաթյանի և Գուրգեն Թորոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Վաղարշակ Ազիզյանի և դիմողի ներկայացուցիչ Ռաֆայել Ազիզյանի,

քննության առնելով փաստաբան Վաղարշակ Կոլյայի Աբրահամյանին (արտոնագիր՝ թիվ 1363) **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Վաղարշակ Ազիզյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ ***(այսուհետ նաև՝ Պալատ)*** հայտնել է, որ փաստաբան Վաղարշակ Աբրահամյանին վճարել է պայմանագրով նախատեսված հոնորարը, սակայն վերջինս չի մասնակցել դատական նիստերի, ինչպես նաև լքել է ՀՀ տարածքը առանց Դիմողին տեղեկացնելու: Հեռախոսային խոսակցությունների ընթացքում Փաստաբանը խոստացել է վերադարձնել գումարն ամբողջությամբ, սակայն չի վերադարձրել և այլևս չի պատասխանել հեռախոսազանգերին:

Դիմումին կից ներկայացվել են նաև Պալատին հասցեագրված 2025 թվականի նոյեմբերի 26-ի դիմումը, Պալատի 2025 թվականի դեկտեմբերի 15-ի պատասխանը, և վճարման երկու անդորրագրեր:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է Փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու

Թիվ ԿԳ-26002-2-Ա
29.04.2026թ.

նպատակով Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը սահմանված ժամկետում չի ներկայացրել ապացույցներ:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն դիմումի վերաբերյալ: Բացատրություններ չեն ներկայացվել:

Պալատի սպասարկող բաժնի աշխատակիցը 19.02.2026թ. Փաստաբանին հասցեագրել է նաև կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու մասին պահանջ, որին ի պատասխան Փաստաբանի կողմից 26.02.2026թ. ներկայացվել է բացատրություն և կից նյութեր:

Փաստաբանը նշել է, որ ի սկզբանե չի ստացել բողոքը՝ ժամանակավորապես երկրից բացակայելու պատճառաբանությամբ, սակայն այժմ, ծանոթանալով նախագահի որոշման բովանդակությանը՝ հայտնում է, որ Դիմողի պնդումները լիովին անհիմն են և առարկայազուրկ:

Մասնավորապես, Փաստաբանը նշել է, որ 2024թ. հուլիս ամսին Դիմողի հետ կնքել է փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագիր, որի առարկան է եղել քաղաքացուն խորհրդատվություն մատուցելը, հայցապահանջ նախապատրաստելը, ինչպես նաև դրա ուղղությամբ հարցումներ կատարելը և ապացույցներ ձեռք բերելը, ինչն ինքն ամբողջությամբ կատարել է: Պայմանագրի գինը կազմել է 100.000 ՀՀ դրամ, ինչը Դիմողի խնդրանքով վճարվել է մաս-մաս:

Փաստաբանի կողմից հայցադիմումը ներկայացվել է ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան 29.07.2024թ. և 08.10.2024թ. որոշմամբ թիվ ԱՐԴ/0666/02/24 քաղաքացիական գործն ընդունվել է դատավորի վարույթ և նշանակվել է նախնական դատական նիստ: 17.12.2025թ. վճռով հայցադիմումը մասնակիորեն բավարարվել է:

Գործով մասնակցելու, ներկայացուցչություն իրականացնելու վերաբերյալ պայմանագիր Փաստաբանը չի կնքել Դիմողի հետ և նման պարտավորություն չի վերցրել իր վրա: Դիմողը հարցրել է, թե ներկայացուցչությունն ինչ կարժենա, որին ի պատասխան Փաստաբանը հայտնել է, որ կարժենա 500.000 ՀՀ դրամ, իսկ Դիմողը նշել է, որ ի վիճակի չէ վճարելու :

Փաստաբանը հայտնել է, որ 2024թ. նոյեմբերին բուժման նպատակով մեկնել է Հայաստանից և մինչ օրս չի վերադարձել:

Ավելին, Փաստաբանը հայտնել է, որ Գ.Օգանեսյանի հետ Դիմողը կնքել է դատական ներկայացուցչություն իրականացնելու մասին պայմանագիր :

Նշել է նաև, որ 18.02.2026թ. Դիմողի ավել վճարված գումարը հետ է փոխանցել նրան, իսկ գումարի ավել վճարված լինելու մասին իմացել է կտրոնների լուսանկարները ստանալուց հետո:

Բացատրությանը կից Փաստաբանը ներկայացրել է 24.07.2024թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը անստորագիր, ինչ

հայալեզու վճարման անդորրագրեր, ինչպես նաև երկու բանկային անդորրագիր՝ 100.000 և 50.000 ՀՀ դրամ գումար, որը փոխանցվել է Վաղարշակ Ազիզյանից Վաղարշակ Աբրահամյանին:

3. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 29.01.2026 թվականի թիվ 73-Ա/ԿԳ-26002 որոշմամբ փաստաբան Վաղարշակ Աբրահամյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 3.1.1, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

05.02.2026թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Շուշան Հարությունյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 03.04.2026թ. կազմել է եզրակացություն: Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-ից 6-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 03.04.2026թ.-ին:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել՝ 29.04.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Դիմողի կողմից Փաստաբանին փոխանցվել է 150.000 ՀՀ դրամ գումար: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված անդորրագրերով:*

2. 29.07.2024թ. Արմավիրի մարզի դատարան է մուտքագրվել Վաղարշակ Ազիզյանի հայցադիմումը, որը նախապատրաստել է Վաղարշակ Աբրահամյանը, սակայն դատարան ներկայացրել է Վաղարշակ Ազիզյանը: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև «ԴատաԼեքս» տեղեկատվական հարթակի ուսումնասիրությամբ:*

3. Թիվ ԱՐԴ/0666/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում որպես Վաղարշակ Ազիզյանի ներկայացուցիչ դատարանում հանդես է եկել Գարիկ Օգանեսյանը: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» տեղեկատվական հարթակի ուսումնասիրությամբ:*

4. Փաստաբանը չի մասնակցել դատական նիստերին: *Սույն փաստը հաստատվում է*

Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված դիրքորոշումներով, ինչպես նաև «Դատալեքս» տեղեկատվական հարթակի ուսումնասիրությամբ:

5. Թիվ ԱՐԴ/0666/02/24 քաղաքացիական գործով առաջին դատական նիստը տեղի է ունեցել՝ 2024թ. հոկտեմբերի 08-ին, ժամը՝ 15:50-ին:

6. Փաստաբանը 21.02.2026թ. Դիմողին վերադարձրել է 100 եվրո գումար: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված ոչ հայալեզու փոխանցման անդորրագրով, որի՝ Փաստաբանի նշած բովանդակության ու վկայակոչած փաստի դեմ Դիմողը չի առարկել:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Վաղարշակ Աբրահամյանը փաստաբան է հանդիսանում 14.07.2012 թվականից, և 2021-2026թթ ընկած ժամանակահատվածում չի ունեցել կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Վաղարշակ Աբրահամյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.1 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի*

կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հետևանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, փաստաբան Վաղարշակ Աբրահամյանին վերագրում է բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու, հանձնարարության կատարման ընթացքի մասին վստահորդին կանոնավորապես չտեղեկացնելու, դատական նիստերին չմասնակցելու պարագայում վստահորդին նախապես չտեղեկացնելու և պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանքը՝ վստահորդին չվերադարձնելու վարքագիծը:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցին.

- ***արդյո՞ք Փաստաբանն ունեցել է պարտականություն մասնակցելու դատական նիստերին, և եթե այո՝ մասնակցել է արդյո՞ք,***

- ***արդյո՞ք դատական նիստերին մասնակցելու անհնարինության դեպքում Փաստաբանը նախապես տեղեկացրել է իր վստահորդին և ձեռնարկել իրենից կախված միջոցները նշված նիստերը հետաձգելու համար,***
- ***արդյո՞ք կողմերի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծվել է,***
- ***արդյո՞ք Փաստաբանը պարտավոր էր Դիմողին վերադարձնել, և եթե այո՝ արդյո՞ք վերադարձրել է պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարել,***
- ***արդյո՞ք Փաստաբանը կանոնավորապես տեղեկացրել է վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի վերաբերյալ:***

➢ **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 3.1.1, 3.5.5 ենթակետերի մասով**

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝*

*1) ազնվորեն և **բարեխղճորեն** պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.*

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 3.1.1-ին ենթակետի համաձայն՝ *արձակուրդ մեկնելու կամ հարգելի այլ պատճառով իր վստահորդին վերաբերող դատական նիստին, վարչական վարույթին, դատավարական կամ քննչական գործողությանը մասնակցելու անհնարինության դեպքում, փաստաբանը պարտավոր է նախապես տեղեկացնել իր վստահորդին այդ մասին և ձեռնարկել իրենից կախված միջոցները նշված նիստը կամ գործողության կատարումը հետաձգելու համար:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, **բարեխղճորեն**, որակավորված, սկզբունքայնորեն և **ժամանակին**, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Համադրելով Օրենքի և Կանոնագրքի նշված ենթակետերը՝ Հանձնաժողովը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի կոնկրետ հանձնարարության շրջանակներում իրականացվող գործունեության բարեխղճության և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ փաստաբանը պարտավոր է ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

ՄԱԿ-ի 1990թ. **«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»**-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, inter alia, **«իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը»** (կետ 13(բ), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Սույն գործում առկա ապացույցներից, պարզ է դառնում, որ Փաստաբանը ստանձնել է փաստաբանական ծառայություններ մատուցելու պարտավորություն դեռևս 2024 թվականի հուլիսից:

Ներկայացված չստորագրված պայմանագրի համաձայն՝ Փաստաբանը պարտավորվել է տրամադրել իրավաբանական խորհրդատվություն, նախապատարաստել հայցադիմում, դիմում, վերաքննիչ բողոք և վճռաբեկ բողոք,ինչի համար սահմանվել է հոնորար 50.000 (հիսուն հազար ՀՀ դրամի չափով, որը բանկային փոխանցմամբ վճարվել է Դիմողի կողմից):

Միաժամանակ, անհերքելի է այն փաստը, որ չնայած պայմանագրով սահմանված հոնորարը 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ է եղել, սակայն Դիմողը Փաստաբանին վճարել է ընդհանուր առմամբ 150,000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, քանի որ վերջինիս կողմից կատարվել է ևս մեկ դրամական փոխանցում 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով կատարելու միջոցով:

Դիմողը սույն կարգապահական գործով հրավիրված նիստի ժամանակ ժամանակ ներկայացրել է մեկ այլ անստորագիր պայմանագիր՝ թվագրված 24.07.2024թ.-ով, որի բովանդակությունը նույնությամբ համապատասխանում է Փաստաբանի կողմից ներկայացրած պայմանագրի բովանդակությանը, բացառությամբ պայմանագրով սահմանված հոնորարի վճարի չափին:

Սույն կարգապահական գործով հրավիրված նիստի ժամանակ Դիմողը հայտնել է, որ առաջին դատական նիստը տեղի է ունեցել 08.10.2024թ., որին Փաստաբանը ներկա չի գտնվել: Ըստ Դիմողի՝ նրանք կապվել են Փաստաբանի հետ, փորձել են ճշտել, թե ինչու Փաստաբանը չի ներկայացել դատական նիստին, ինչին ի պատասխան՝ Փաստաբանը հատնել է, որ ներկայացուցչություն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ Դիմոը վճարի հավելյալ 100.000 ՀՀ դրամ գումար: Դիմողը 100.000 ՀՀ դրամ գումարը վճարել է 2024թ. նոյեմբեր 5-ին, ինչը հաստատվում է դիմումին կից ներկայացված վճարման անդորրագրով:

Դիմողը նաև նիստի ժամանակ շարունակել է պնդել, որ Փաստաբանը, չնայած իր կողմից հոնորարի վճարման պարտականությունները կատարելուն, պատշաճ կերպով չի ներկայացել հաջորդ՝ 05.06.2025թ. նշանակված դատական նիստին, չի պատասխանել իր հեռախոսազանգերին և վերջինիս հետ կապ հաստատելու բազմաթիվ անհաջող փորձերից հետո, ստիպված է եղել 19.06.2026թ. պայմանագիր կնքել այլ փաստաբանի հետ: Իսկ արդեն ՀՀ փաստաբանների պալատ սույն գործով դիմումը ներկայացնելուց հետո միայն, Փաստաբանը վերջինիս փոխանցել է 100 եվրո գումար:

Հանձնաժողովը կարևոր է համարում արձանագրել, որ փաստաբանի մասնագիտական պարտականությունների գնահատման չափանիշը միայն այն չէ, թե արդյոք նա որևէ շփում կամ ներգրավվածություն ունեցել է գործով, այլ այն, թե արդյոք նրա վարքագիծը եղել է օբյեկտիվորեն պիտանի և արդյունավետ վստահորդի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից: Այս առումով ձևական կամ ոչ լիարժեք գործողությունների կատարումը, որն ըստ էության չի առաջացնում վստահորդի շահերի պաշտպանության իրական արդյունքի հասնելու ողջամիտ հնարավորություն, չի կարող դիտարկվել որպես բարեխիղճ և որակյալ իրավաբանական օգնություն:

Վերոգրյալը համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ ըստ կարգապահական գործի նյութերի՝ կողմերի միջև բացակայում է գրավոր ստորագրված պայմանագիրը, սակայն կողմերի բացատրություններով ու փաստացի վարքագծով հաստատվում է, որ կողմերը որոշակի համաձայնություն են ունեցել Փաստաբանի կողմից Դիմողին իրավական օգնության ծառայություն մատուցելու հարցի շուրջ, այսինքն՝ այդ իմաստով կողմերի միջև առկա է պայմանագիր՝ կնքված օֆերտայի ու ակցեպտի միջոցով, ուստի այդ իմաստով Հանձնաժողովը հաստատված է համարում կողմերի միջև իրավական օգնություն ցուցաբերելու պայմանագրի կնքվածությունն ու առկայությունը՝ հաջորդիվ քննարկման առարկա դարձնելով այդպիսի պայմանագրի բովանդակությունը, այդ թվում նաև՝ կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Ըստ այդմ, դատելով կողմերի բացատրությունների բովանդակությունից ու փաստացի վարքագծից, մասնավորապես՝ հաշվի առնելով, որ Դիմողը, Փաստաբանից ակնկալելով նաև դատական նիստերի մասնակցություն, Փաստաբանին վճարել է 150,000 ՀՀ դրամ; որը գերազանցել է հայցադիմում ներկայացնելու համար կողմերի համաձայնեցրած գումարը, իսկ Փաստաբանը գումարի գերազանցող մասը Դիմողին չի վերադարձրել, ավելին՝ այդ մասով որևէ հարց չի բարձրացրել ու գործողություն չի ձեռնարկել, այդպիսով ամրապնդելով Դիմողի համոզմունքն առ այն, որ Փաստաբանը մասնակցելու է նաև դատական նիստերին, ինչի համար ինքը Փաստաբանին վճարել է:

Չնայած այդ ամենին՝ Փաստաբանը չի մասնակցել դատական նիստերին, ինչի մասին Դիմողին ինչպես նախապես, այնպես էլ հընթացս չի տեղեկացրել՝ չձեռնարկելով նաև դատական նիստի հետաձգմանը կամ Դիմողի իրավական ներկայացուցչության ապահովմանն ուղղված այլ գործողություններ, և հայցադիմում կազմելուց հետո Փաստաբանը Դիմողին առհասարակ իրավական օգնություն փաստացի չի ցուցաբերել, բացի դա՝ Դիմողին չի իրազեկել վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին այդ թվում դատական նիստերին մասնակցելու անհրաժեշտության, նպատակահարմարության, չմասնակցելու հնարավոր դատավարական հետևանքների և հարակից հարցերի մասին՝ նշված արարքներով ինչպես առանձին, այնպես էլ համակցությամբ թույլ տալով Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 3.1.1-րդ և 3.5.5-րդ ենթակետերի պահանջների խախտում:

Այս ամենի հաշվառմամբ Հանձնաժողովը գալիս է այն հետևության, որ Փաստաբանը չի ձեռնարկել այն անհրաժեշտ իրավական ու փաստացի միջոցները, որոնք տվյալ իրավիճակում կարող էին ծառայել Դիմողի իրավունքների և օրինական շահերի բարեխիղճ պաշտպանությանը և վարքագծային-էթիկական քննարկվող պահանջների կատարմանը:

Ուստի Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.1.1-րդ և 3.5.5-րդ ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներ:

➢ **Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման մասով.**

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Կանոնագրքի 3.6.1 ենթակետը հստակ սահմանում է փաստաբանի պարտականությունը կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Սույն կանոնից բխում է, որ փաստաբանները ոչ միայն կրում են վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու, այլ նաև տրամադրված օգնության կամ գործի ընթացքի մասին վերջիններիս տեղեկացնելու պարտականություն: Ընդ որում, փաստաբանի կողմից հենց այս պարտականության կատարումն է, որ հնարավորություն է տալիս վստահորդներին օրինակ տվյալ գործով փոխել իրենց դիրքորոշումը, մոտեցումները կամ նույնիսկ պահանջը: Վերջապես վստահորդի հարցերին պատասխանելը կամ սեփական նախաձեռնությամբ վստահորդին գործի ընթացքի մասին տեղեկացնելը այն ողջամիտ ակնկալիքն է, որ յուրաքանչյուր վստահորդ ունի իր փաստաբանից:

Նշված պարտականությունն իր բնույթով սերտորեն փոխկապակցված է Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետով սահմանված պահանջների հետ, քանի որ վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին տեղեկացնելու պարտականությունը ենթադրում է, որ փաստաբանը նախ իրականացնում է հանձնարարությունից բխող համապատասխան գործողություններ, ձևավորում է

որոշակի ընթացք, և այնուհետև այդ ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները է հաղորդում վստահորդին:

Այլ կերպ, վստահորդին գործի ընթացքի մասին տեղեկացնելը չի հանդիսանում փաստաբանի գործունեությունից ինքնաբավ ու առանձնացված պարտականություն, այլ հանդիսանում է նրա կողմից իրականացվող իրավաբանական օգնության բնական և անհրաժեշտ բաղադրիչը: Հետևաբար, երբ փաստաբանը չի կատարում հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ, նա ոչ միայն չի ապահովում վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը, այլ նաև չի ստեղծում այնպիսի փաստական և իրավական ընթացք, որի մասին կարող էր կանոնավորապես տեղեկացնել վստահորդին:

Սույն գործով արձանագրվել է, որ Փաստաբանն ընդունել է, որ 2024թ. նոյեմբերին մեկնել է Հայաստանից բուժման նպատակով և մինչ օրս չի վերադարձել, ինչպես նաև խզել է կապը վստահորդի հետ մասնավորապես չմասնակցելով հետագա դատական նիստերին՝ քանի որ, իր պնդմամբ, գործով մասնակցելու, ներկայացուցչություն իրականացնելու վերաբերյալ պայմանագիր չի կնքել Դիմողի հետ և նման պարտավորություն չի ունեցել առհասարակ: Գործի քննության արդյունքում պարզ է դարձել, որ Փաստաբանը ժամանակին չի պարզաբանել կողմերի միջև ծագած ֆինանսական և իրավական հարաբերությունների վերջնական կարգավիճակը՝ վստահորդին թողնելով անորոշության մեջ:

Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը տիրապետել է գործի ընթացքին և Դիմողի հետ կանոնավորապես կիսվել այդ տեղեկատվությամբ:

Հետևաբար, վերոնշյալ հանգամանքների համակցված գնահատմամբ Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Փաստաբանը չի կատարել նաև Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետով իր վրա դրված պարտականությունը, քանզի չի ներկայացվել վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցություն՝ Դիմողին գործի ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացնելու մասին:

➢ **Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի խախտման մասով.**

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Սույն գործով կողմերի բացատրությունների հիման վրա Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Դիմողի ու Փաստաբանի համագործակցությունը դադարել է (ըստ էության՝ պայմանագիրը լուծվել է):

Հանձնաժողովն արձանագրում է, որ չվաստակած հոնորարի վերադարձը պետք է կատարվի պայմանագրի լուծման կամ հանձնարարության ավարտի պահին կամ դրան հաջորդող ողջամիտ ժամկետում, ընդ որում՝ լրիվ ծավալով, ինչը Փաստաբանի կողմից ակնհայտ կերպով չի կատարվել, քանի որ սույն գործի քննության ընթացքում հաստատվել է այն հանգամանքը, որ Դիմողը փաստաբանին փոխանցել է պայմանագրում

սահմանված հոնորարը գերազանցող գումար (առնվազն 100.000 ՀՀ դրամի չափով), մինչդեռ վերջինս Դիմողին նախքան սույն կարգապահական վարույթի հարուցումը որևէ գումար չի վերադարձրել, իսկ այդուհետ վերադարձրել է 100 եվրոյի չափ գումար, որը պակաս է եղել Դիմողի կողմից Փաստաբանին ավել վճարված 100 000 ՀՀ դրամից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը խախտել է Կանոնագրքի 3.8.4 ենթակետի 1-ին պարբերությունը նույնպես:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա է նկատողություն տույժի տեսակը ընտրելու առանձին երկու հիմք:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-

րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վաղարշակ Կոլյայի Աբրահամյանի (արտոնագիր՝ թիվ 1363) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.1, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1) ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան՝**

Թիվ ԿԳ-26002-2-Ա
29 ապրիլի 2026թ.
ք.Երևան